ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ կառավարման ակադեմիայի
իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
DOI: 10.63925/18294847-2026.blj22-04

Ամփոփագիր: Հոդվածում հիմնավորվում է, որ քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երկու հարաբերականորեն ինքնուրույն փուլից՝ նախաքննության փուլից և նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլից: Հեղինակը քննադատում է այն մոտեցումը՝ ըստ որի նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեությունը համարվում է նախաքննության փուլի եզրափակիչ մաս: Վերլուծելով դոկտրինալ չափանիշները (փուլի անմիջական խնդիր, սուբյեկտային կազմ, դատավարական ձև, ժամկետներ, փուլը եզրափակող ակտ)՝ հեղինակը ցույց է տալիս, որ դատախազական վերստուգումն օժտված է դատավարության փուլին հատուկ բոլոր հատկանիշներով:

Իրավահամեմատական վերլուծությունը (Լատվիա, Բուլղարիա, Չինաստան, Իսպանիա) ցույց է տալիս, որ տարբեր իրավական համակարգերում քննության ավարտից հետո դատախազի գործունեությունը ճանաչվում է որպես դատավարության ինքնուրույն փուլ:

ՀՀ քրեական դատավարությունում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն ունի դրսևորման երկու ձև՝ կախված նրանից, թե քննիչը դատախազին ինչ ակտ է ներկայացրել՝ 1) դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծում (երբ ներկայացվում է մեղադրական եզրակացություն), 2) քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծում (երբ ներկայացվում է վարույթը կարճելու մասին որոշում): Երկու դեպքում էլ դատախազը կատարում է նույն գլխավոր գործառույթը՝ վերստուգում է նախաքննության արդյունքները, սակայն յուրաքանչյուր ձև ունի իր

առանձնահատկությունները (գործառույթներ, լիազորություններ, միջնորդությունների քննարկման կարգ), և ավարտվում է փուլին բնորոշ եզրափակիչ որոշմամբ:

Առանձին ուշադրություն է դարձվում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում դատախազի երկակի կարգավիճակին և դրա սահմանադրականությանը:

Հիմնաբառեր: Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգում, քրեական դատավարության փուլ, մինչդատական վարույթ, դատախազի կարգավիճակ, խափանման միջոց, մեղադրական եզրակացություն:

§ 1. Ընդհանուր դրույթներ

Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն կազմելով կամ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով (դրանք և վարույթի նյութերը հսկող դատախազին հանձնելով), սակայն դրանով մինչդատական վարույթը չի եզրափակվում, քանի որ մեղադրական եզրակացությունը կամ վարույթը կարճելու մասին որոշումը վարույթի նյութերի հետ միասին դատախազին հանձնելուց հետո ծագում է մի ժամանակահատված, որի ընթացքում դատախազը և վարույթի մյուս մասնակիցներն իրականացնում են որոշակի դատավարական գործունեություն, և առաջանում են դատավարական հարաբերություններ:

Սույն աշխատանքում կփորձենք հիմնավորել այն թեզը, որ մինչդատական վարույթը՝ որպես համակարգ, բաղկացած է երկու հարաբերականորեն ինքնուրույն փուլից՝ նախաքննության փուլից և նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլից[1]: Վերջինս, կախված վերստուգման օբյեկտից, իրականացվում է մի դեպքում դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով, մեկ այլ դեպքում՝ քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով:

[1] Տեքստում կօգտագործվի նաև «դատախազական վերստուգման փուլ» անվանումը:

§ 2. Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի ճանաչման դոկտրինալ և իրավահամեմատական տեսանկյունները

2.1. Դոկտրինալ տեսանկյունը

Քրեական դատավարության գիտության մեջ հստակեցված չէ այն հարցը, թե նախաքննության ավարտից հետո դատախազի ստուգողական գործունեության ժամանակահատվածը մինչդատական վարույթի համակարգում ինչ տեղ է զբաղեցնում:

Քրեական դատավարության դասագրքերում սովորաբար նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածը միաձուլվում է նախաքննության փուլի հետ. այն համարվում է նախաքննության փուլի եզրափակիչ մասը: Սակայն ժամանակակից դատավարագիտության մեջ քննարկվում է մեղադրական եզրակացությունն ստանալուց հետո դատախազական վարույթը որպես մինչդատական վարույթի առանձին փուլ դիտարկելու հարցը[2]:

Առանձին դատավարագետներ նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածը համարում են դատավարության ինքնուրույն փուլ: Այս մոտեցման կողմնակիցներն առաջարկում են այս փուլն անվանել դատախազի կողմից քրեական գործը դատարան հանձնելու փուլ[3], կամ մեղադրյալին դատի տալու փուլ[4], կամ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման փուլ[5]:

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի առանձնացման կողմնակիցների շարքին կարելի է դասել նաև այն հեղինակներին, ովքեր նշում են, որ նախաքննությունը (նախնական քննությունը) ավարտվում է ոչ թե դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելով կամ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ դատարան հանձնելով, այլ քննիչի կողմից մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ դատախազին հանձնելով[6]: Եթե

---

[2] Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс. учебник под общ. ред. А. В. Смирнова. 6-еизд., перераб. М.: Норма: ИНФРА-М. 2015. С. 377, Резяпов А. А. Окончание предварительного расследования с обвинительным заключением (актом, постановлением) и направление уголовного дела в суд: дис. … канд. юрид. наук. Ижевск, 2014. С. 28.

[3] Дикарев И.С. Модернизация системы досудебного производства в уголовном процессе // Правовая парадигма. 2017. Т. 16, № 2. С. 117-122.

[4] Манова Н.С., Францифоров Ю.Ф. Процессуальная природа деятельности прокурора при окончании досудебного производства // Российский следователь. 2003. № 8. С. 36.

[5] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան: 2-րդ լրամշակված հրատ., Երևան, Լուսաբաց, 2017, էջ 30-31:

[6] Баранов А. М. Процессуальные ошибки на этапе окончания предварительного следствия и способы их исправления: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1992. С. 13-14.

նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը դատախազին հանձնելով, ուստի դրանից հետո ծագող դատավարական հարաբերությունները չեն կարող համարվել նախաքննության (նախնական քննության) փուլի մաս:

Այն գիտնականները, որոնք նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեությունը չեն համարում մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ, ներկայացնում են երկու հիմնական պատճառ:

Նախ՝ նրանք կարծում են, որ մեղադրական եզրակացությունը հաստատելու հարցի լուծման կապակցությամբ դատախազի իրականացրած վարույթը քրեական դատավարության փուլ չէ, քանի որ այս ընթացքում դատախազը դատավարական իմաստով գործում է միայնակ, ուստի բացակայում է քրեական դատավարության փուլերին հատուկ սուբյեկտների համակարգը, որոնք միմյանց հետ դատավարական փոխհարաբերությունների մեջ են[7]:

Նշված մոտեցումն ընդունելի չէ: Դատախազը նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում թեև օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի և դատարանի, երբեմն նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ (այս մասին՝ հաջորդիվ):

Երկրորդ՝ նրանք, քրեական դատավարության փուլերի համակարգը որոշելիս օրենսդրության կառուցվածքին տալիս են վճռորոշ նշանակություն: Օրինակ՝ առանձին հեղինակներ նշում են, որ մեղադրական եզրակացությամբ ստացված նյութերով դատախազի գործողությունների և որոշումների վերաբերյալ նորմերը տեղադրված են ՌԴ ՔրԴՕ-ի «Նախնական քննություն» բաժնում, ուստի դրանով իսկ դրանք համարվում են նախնական քննության կառուցվածքի մաս[8]:

Այս մոտեցումը ևս ընդունելի չէ: «Քրեական դատավարության փուլ» ձևակերպումը դոկտրինալ, ոչ թե օրենսդրական հասկացություն է: Քրեական վարույթի

[7] Уголовный процесс. Проблемные лекции / под ред. В. Т. Томина, И. А. Зинченко. М.: Юрайт, 2013. С. 82.

[8] Насонова И.А., Буров Ю.В. Процессуальный порядок окончания предварительного следствия с составлением обвинительного заключения. М.: Юрлитинформ, 2012. С. 22-23.

որևէ ժամանակահատված (ընթացք) ճանաչվում է որպես քրեական դատավարության փուլ՝ ելնելով առաջին հերթին դոկտրինում մշակված չափանիշներից (փուլի անմիջական խնդիր, սուբյեկտային կազմ, դատավարական ձևի առանձնահատկություն, փուլը եզրափակող ակտի առկայություն և այլն): Օրենսդրության կառուցվածքը թեև կարող է ազդեցություն ունենալ դատավարության փուլի որոշման (ճանաչման) համար, սակայն դա չի կարող ունենալ վճռորոշ նշանակություն: Հաջորդիվ կներկայացվի, որ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման ընթացքը բավարարում է քրեական դատավարության փուլերին ներկայացվող դոկտրինալ հատկանիշներին:

2.2. Իրավահամեմատական տեսանկյունը

Իրավահամեմատական տեսանկյունից քրեական դատավարության մինչդատական վարույթը դատավարական փուլերի բաժանման վերաբերյալ օրինաչափություններ բացահայտելը բարդ է, եթե ոչ՝ անհնար, սակայն մեր ներկայացրած թեզը, ըստ որի՝ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգումը մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է, առավել համոզիչ դարձնելու նպատակով ներկայացնենք մի քանի երկրների դատավարական համակարգեր, որտեղ նման փուլի գոյությունն ստացել է լայն ճանաչում:

Լատվիա

Լատվիայի քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երկու մասից՝ նախաքննություն (Izmeklēšana), որը ներառում է ապացույցների հավաքումը, և քրեական հետապնդում (Kriminālvajāšana), որը ներառում է դատախազի գործունեությունը՝ կապված անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք ներկայացնելու հետ[9]: Դատախազը, քննչական մարմնից ստանալով վարույթի նյութերը, տասնօրյա ժամկետում սկսում է քրեական հետապնդում՝ անձի քրեական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելով: Այս փուլում դատախազը կարող է կայացնել գործը դատարան հանձնելու, քրեական վարույթը դադարեցնելու մասին որոշում կամ օրենքով նախատեսված՝ այլ որոշումներ[10]:

[9] Уголовный процесс европейских государств : монография. Под ред. В. И. Самарина, В. В. Луцика. М.: Проспект, 2018. С. 433.
[10] Տե՛ս նույն տեղում, էջ 456:

Լատվիայի քրեական դատավարությունում «քրեական հետապնդումը» (kriminālvajāšana) մինչդատական վարույթի երկրորդ ինքնուրույն փուլն է, որի ընթացքում վարույթն իրականացնում է դատախազը: Այս փուլն ունի հստակ ժամկետներ և նպատակ ունի պարզելու գործը դատարան հանձնելու հիմքերի առկայությունը:

Բուլղարիա

Բուլղարիայի քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երկու փուլից՝ նախնական քննություն և դատախազի գործունեությունը նախնական քննության ավարտից հետո: Որոշ հետազոտողներ առանձնացնում են նաև մինչդատական վարույթի բացումը, որը նման է ՀՀ դատավարական համակարգում գործող քրեական վարույթ նախաձեռնելուն, սակայն գիտնականների մեծ մասի կարծիքով այն չի համարվում մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ[11]:

Քննությունն ավարտելուց հետո՝ մինչ գործը դատախազին ուղարկելը, քննիչը կամ հետաքննիչը կազմում է գրավոր կարծիք: Այդ կարծիքում կարող է արձանագրվել, որ.

1) մեղադրանքն ապացուցված է, և մեղադրյալը պետք է հանձնվի դատարան.

2) առկա են վարույթը կարճելու հիմքեր (Բուլղարիայի ՔրԴՕ 24-րդ հոդվածի 1-ին մաս) կամ մեղադրյալի մասնակցությունը հանցանքի կատարմանը լիակատար հավաստիությամբ ապացուցված չէ.

3) առկա են վարույթը կասեցնելու հիմքեր՝ հանցագործությունը կատարած անձը չի հայտնաբերվել, կամ կարևոր ականատեսը երկար ժամանակ բացակայում է երկրից (Բուլղարիայի ՔրԴՕ 25-րդ, 26-րդ հոդվածներ):

Գրավոր կարծիքը կազմելուց անմիջապես հետո այդ կարծիքը վարույթի նյութերի հետ միասին հանձնվում է դատախազին, որից հետո սկսվում է մինչդատական վարույթի երկրորդ փուլը՝ դատախազի գործունեությունը նախնական քննության ավարտից հետո, որը բաժանվում է երկու հիմնական մասի՝ քննության որակի ստուգում և ստացված նյութերի հիման վրա որոշման կայացում: Որոշում կայացնելու համար դատախազին տրվում է մեկ ամիս ժամկետ:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 660:

Եթե դատախազն ստուգման ընթացքում հայտնաբերում է էական դատավարական խախտումներ, նա կարող է հանձնարարություն տալ քննություն իրականացնող մարմնին վերացնել դրանք կամ ինքը պետք է դրանք վերացնի: Եթե անհրաժեշտ է լրացուցիչ քննչական գործողությունների կատարում, դատախազը երկարաձգում է քննության ժամկետը:

Դատախազն իր որոշմամբ կարող է կարճել կամ կասեցնել վարույթը: Եթե դատախազը հաստատում է, որ բացակայում են վարույթը կասեցնելու կամ կարճելու հիմքեր, օբյեկտիվ ճշմարտությունը հաստատելու համար ձեռք են բերվել բավարար ապացույցներ, և քննության ընթացքում թույլ չեն տրվել էական դատավարական խախտումներ, ապա նա կազմում է մեղադրական ակտ: Մեղադրական ակտը դատարան ներկայացնելը համարվում է դատարանում մեղադրանք առաջադրել և դատական փուլի սկիզբը: Բուլղարացի դատավարագետները մեղադրական ակտը դիտարկում են որպես դատախազի ներկայացրած քրեական հայց, որով նա մրցակցային դատավարությունում ճանաչվում է որպես ամբաստանյալի հետ հավասար կողմ[12]:

Չինաստան

Չինաստանի քրեական դատավարության մինչդատական վարույթը բաղկացած է երեք փուլից՝ 1) գործի հարուցում (հանցանքի մասին հաղորդում տալու փուլ), 2) նախաքննություն, 3) հանրային մեղադրանքի առաջադրում: Չինական քրեադատավարական դոկտրինում ճանաչում ունի այն մոտեցումը, որ հանրային մեղադրանքի առաջադրումը, որը երբեմն անվանում են նաև հանրային մեղադրանքի հարուցում, մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է[13]:

Հանրային մեղադրանք առաջադրել ասելով հասկացվում է դատախազի դատավարական գործունեությունը, որի ընթացքում ժողովրդական դատախազությունը պետության անունից որոշում է կայացնում դատական քննության հանձնելու համար կասկածյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ կամ, եթե

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 685-687:

[13] Հու Հաոքսին Քրեական հետապնդման և գործերի վերանայման կարգի մասին // Ցզյանսի նահանգի ոստիկանության ակադեմիայի ամսագիր, 2003, № 5, էջ 45-48 (չիներենով), Сумин А. А., Химичева О. В. Введение в современный уголовный процесс Китайской Народной Республики: монография. М.: Юрлитинформ, 2024. С. 19-20, 221.

հիմքեր չկան, ավարտում է քրեական հետապնդումը (այսինքն՝ որոշում է մեղադրանք չառաջադրել)[14]:

Հանրային մեղադրանքի հարուցումը մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է, քանի որ այն բավարարում է դատավարության փուլերին ներկայացվող հատկանիշներին: Այս փուլի գլխավոր խնդիրն է ձևավորել դատախազի այն համոզմունքը, որ գործը դատարան ուղարկելն օրինական է, հիմնավորված և անհրաժեշտ: Այս փուլի անմիջական խնդիրներն են՝ նախաքննության (այդ թվում՝ հարկադրանքի միջոցների կիրառման) օրինականության ստուգումը, հավաքված ապացույցների նախնական գնահատումը, հանրային մեղադրանք առաջադրելու հիմքերի առկայության և քրեական պատասխանատվության ենթարկելուն խոչընդոտող հանգամանքների բացակայության ստուգումը[15]:

Այս փուլն սկսվում է այն պահից, երբ քրեական գործը՝ քննիչի կազմած նախաքննության ավարտի մասին արձանագրությամբ, և «հետապնդման մասին եզրակացության» կամ «ազատման մասին եզրակացության» հետ հանձնվում է համապատասխան ժողովրդական դատախազություն[16]:

Չինաստանի ՔրԴՕ-ի 172-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը եզրափակիչ դատավարական որոշումը պետք է կայացնի հետևյալ ժամկետներում՝ մեկ ամսվա ընթացքում (խոշոր կամ բարդ գործի դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով) կամ 10 օրվա ընթացքում, եթե կասկածյալն ընդունում է իր մեղքը և համաձայնում է կրել պատիժը, և առկա են արագացված դատաքննության ընթացակարգի կիրառման պայմանները:

Դատախազը գործն ստուգելիս հարցաքննում է քրեական հետապնդման ենթարկվող կասկածյալին, լսում է պաշտպանի կամ հերթապահ փաստաբանի, տուժողի և տուժողի դատավարական ներկայացուցչի կարծիքները (Չինաստանի ՔրԴՕ 173-րդ հոդված): Այս փուլում դատախազը կարող է՝ պահանջել հանրային անվտանգության մարմնից

---

[14] Сумин А. А., Химичева О. В. Введение в современный уголовный процесс Китайской Народной Республики: монография. М.: Юрлитинформ, 2024. С. 221.

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 221:

[16] Երբ քննիչը եզրակացնում է, որ առկա են նախաքննությունն ավարտելու բոլոր պայմանները, նա կազմում է երկու դատավարական փաստաթուղթ՝ առաջինը կոչվում է նախաքննության ավարտի մասին արձանագրություն, երկրորդը՝ հետապնդման մասին եզրակացություն, եթե կարծում է, որ առկա են գործը դատարան ուղարկելու հիմքեր, իսկ եթե առկա են վարույթը կարճելու հանգամանքներ, ապա կազմում է ազատման մասին եզրակացություն:

տրամադրել դատական քննության համար անհրաժեշտ ապացույցներ, պահանջել հանրային անվտանգության մարմնից պարզաբանել ապացույցների հավաքման օրինականությունը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ապացույցները ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով (Չինաստանի ՔրԴՕ-ի 175-րդ հոդված):

Հանրային մեղադրանքի առաջադրման փուլն ավարտվում է հետևյալ որոշումներից մեկի կայացմամբ՝

1) մեղադրական եզրակացություն.

2) մեղադրանք չառաջադրելու որոշում.

3) գործը լրացուցիչ քննության ուղարկելու որոշում:

Այն, որ Չինաստանի քրեական դատավարությունում մեղադրանքի առաջադրումը դատավարության ինքնուրույն փուլ է, հիմնավորվում է նաև Չինաստանի ՔրԴՕ-ի կառուցվածքով: Այսպես՝ Չինաստանի ՔրԴՕ-ի երկրորդ մասը բաղկացած է երեք գլուխներից՝ գործի հարուցում (Chapter I: Filing a Case), քննություն (Chapter II: Investigation), հանրային մեղադրանքի առաջադրում (Chapter III: Initiation of Public Prosecution)[17]: Օրենսգրքի կառուցվածքում «Քննությունը» և «Հանրային մեղադրանքի առաջադրումը» առանձնացված են որպես ինքնուրույն գլուխներ, ինչը վկայում է այն մասին, որ օրենսդիրը քննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածը ևս ուղղակիորեն ճանաչել է որպես դատավարության ինքնուրույն փուլ:

Իսպանիա

Իսպանիայի քրեական դատավարությունը բաղկացած է քննության, միջանկյալ, գործը դատարանում քննելու և դատական վարույթի մյուս փուլերից: Միջանկյալ փուլը (*fase intermedia*) հաջորդում է քննության փուլին և նախորդում դատական քննության փուլին: Սա բնույթով նախապատրաստական (կազմակերպական) փուլ է: Միջանկյալ փուլն սկսվում է այն պահից, երբ քննչական դատավորը (*Juez de Instrucción, следственный судья*) գալիս է այն եզրակացության, որ կատարվել են բավարար քննչական գործողություններ, և

[17] Criminal Procedure Law of the People's Republic of China (Amended in 2018) // https://www.lexiscn.com/law/law-english-1-3336194-T.html?eng=1

հավաքվել են բոլոր անհրաժեշտ ապացույցները: Այդ դեպքում նա հայտարարում է քննությունն ավարտի մասին և կայացնում է համապատասխան ակտ:

Իսպանական քրեական դատավարության միջանկյալ փուլը որպես այդպիսին հստակ տարանջատված է միայն ընդհանուր (սովորական) տեսակի վարույթներում[18]:

Միջանկյալ փուլի ավարտին քննչական դատավորը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) վարույթի կարճման մասին (*sobreseimiento*).

2) գործը համապատասխան դատարան հանձնելու մասին:

Քննչական դատավորի կողմից գործն առաջին ատյանի դատարան հանձնելու մասին որոշմանը նախորդում է դատախազի կողմից մեղադրական եզրակացության (*escrito de acusación*) ներկայացումը: Այսինքն՝ այս փուլում դատախազը կազմում է մեղադրական եզրակացություն, որը պարունակում է կոնկրետ պահանջ (հայց) կոնկրետ անձի (անձանց) նկատմամբ: Այդ եզրակացությունը ներկայացվում է քննչական դատավորին, որը կայացնում է գործը դատարան հանձնելու մասին որոշում[19]:

Իսպանական դատավարագիտության մեջ միջանկյալ փուլը հիմնականում դիտարկվում է որպես դատաքննությանը նախորդող գործի վերահսկման ժամանակահատված (control del caso previo al juicio), որի գլխավոր նպատակն է իրականացնել գործի՝ դատաքննության ուղարկելու իրագործելիության (viabilidad) նախնական գնահատում[20]:

Վերոնշյալ համեմատական վերլուծությունը հաստատում է այն թեզը, որ մինչդատական վարույթում քննության (նախաքննության) ավարտից հետո սկսվում է ինքնուրույն փուլ, որը տարբեր երկրներում կոչվում է տարբեր անուններով (Լատվիայում՝ «քրեական հետապնդում» (kriminālvajāšana), Բուլղարիայում՝ «դատախազի գործողությունները քննության ավարտից հետո», Չինաստանում՝ «հանրային մեղադրանքի առաջադրում», Իսպանիայում՝ «միջանկյալ փուլ»), սակայն դրանք էությամբ միասնական են:

---

[18] Барабанов П.К. Уголовный процесс Испании. М.: Спутник +, 2021. С. 101-103

[19] Уголовный процесс европейских государств : монография. Под ред. В. И. Самарина, В. В. Луцика. М.: Проспект, 2018. С. 633-634:

[20] Քվինտերո Խիմենես, Կամիլո Ալբերտո Միջանկյալ փուլը իսպանական քրեական դատավարությունում // *Միջանկյալ փուլը և մեղադրական ակտերի նկատմամբ վերահսկողությունը քրեական դատավարությունում (Ճշմարտությունների և առասպելների միջև)*, Marcial Pons, Մադրիդ, 2021, էջ 25-75 (Իսպաներենով):

§ 3. Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը ՀՀ քրեական դատավարությունում

3.1. Դատախազական վերստուգման փուլի ճանաչման ընդհանուր նախադրյալները

ՀՀ քրեական դատավարությունում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը մինչդատական վարույթի ինքնուրույն փուլ է: Այն նախաքննության փուլի մաս չէ, քանի որ նախաքննության փուլն արդեն իսկ ավարտվել է, իսկ դատախազի այս ժամանակահատվածում իրականացվող գործունեությունը հաջորդում է նախաքննության փուլին: Ավելին՝ ՀՀ ՔրԴՕ 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ուղիղ նշված է, որ մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը դատարան հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը վարույթն իրականացնող մարմինը ոչ թե քննիչն է, այլ հսկող դատախազն է:

Ինչպես նշվեց, քրեական դատավարության փուլը ոչ թե օրենսդրական, այլ դոկտրինալ հասկացություն է, ուստի օրենսդրության կառուցվածքը թեև կարող է ազդեցություն ունենալ դատավարության փուլի որոշման (ճանաչման) համար, սակայն դա չի կարող ունենալ վճռորոշ նշանակություն:

Հայ հեղինակները, հիմք ընդունելով, որ ՀՀ ՔրԴՕ 6-րդ բաժինը վերնագրված է «Մինչդատական վարույթ», նշում են, որ «Օրենսգիրքը մինչդատական վարույթը դիտարկում է որպես մեկ ամբողջություն՝ դրանում ձևականորեն չառանձնացնելով տարբեր ենթափուլեր»[21], իսկ նախաքննության ավարտից հետո դատախազի գործունեության ժամանակահատվածն անվանում են «վարույթը մինչդատականից դատական փուլեր փոխադրելու միջանկյալ կարճ ընթացաշրջան»[22]: Նույն նախադասության մեջ նրանք օգտագործում են «հսկող դատախազն է, որ այս փուլում գնահատում է մեղադրյալի դատապարտման հավանականության մասին քննիչի հետևության

[21] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 268:

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 309:

հիմնավորվածությունը»[23], սակայն պարզ չէ, թե այս դատողության մեջ «փուլ» բառն օգտագործվել է որպես դատավարական տերմին, թե՝ որպես ընդհանուր բառ:

Այնուամենայնիվ, նույնիսկ ՀՀ ՔրԴՕ-ի կառուցվածքի պայմաններում մինչդատական վարույթը խիստ վերապահումներով կարելի է համարել ենթափուլերի չբաժանված մեկ միասնական ամբողջություն: ՀՀ ՔրԴՕ-ի 6-րդ բաժինը վերնագրված է «մինչդատական վարույթ», սակայն այդ բաժնում տեղադրված 27-րդ գլուխը կոչվում է ոչ թե մինչդատական վարույթի ավարտը, այլ նախաքննության ավարտը: Սա նշանակում է, որ օրենսդրության կառուցվածքի տեսանկյունից մինչդատական վարույթը և նախաքննությունը չեն նույնացվում:

Մյուս կողմից՝ ՀՀ ՔրԴՕ-ի 25-րդ գլուխը կոչվում է «Մինչդատական վարույթի ընդհանուր պայմաններ»-ը, սակայն այդ գլխում ամրագրված դրույթների ճնշող մեծամասնությունը վերաբերում է նախաքննության փուլին: Մասնավորապես՝

1) նախաքննության մարմինները և քննչական ենթակայությունը,

2) նախաքննության կատարման վայրը,

3) քննչական խմբի ձևավորումը,

4) հետաքննությունը,

5) նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը[24]:

ՀՀ ՔրԴՕ-ի 25-րդ գլուխի վերնագրի և դրա բովանդակության անհամապատասխանությունը վկայում է այն մասին, որ օրենսդրական հարթությունում դեռևս ամբողջ ծավալով չի գիտակցվել մինչդատական վարույթի երկփուլանի կառուցվածքը:

Այսպիսով՝ թեև մինչդատական վարույթին առնչվող օրենսդրական կառուցվածքի անորոշությունները հրահրում են մինչդատական վարույթի փուլային կառուցվածքի վերաբերյալ բանավեճեր, սակայն դրանք չեն բացառում երկփուլ համակարգի

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 309-310:

[24] Օրենսգրքի այս գլխում ամրագրված դրույթներից թերևս միակը, որը կարող է կիրառվել դատարանում մեղադրանքի հարուցման հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում, դա հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու մասին դրույթն է (ՀՀ ՔրԴՕ 185-րդ հոդված):

(նախաքննություն և դատախազական վերստուգում) դոկտրինալ ճանաչման հնարավորությունը:

Հաջորդ բաժնում կներկայացվի, որ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը համապատասխանում է դատավարության փուլերին ներկայացվող դոկտրինալ չափանիշներին, սակայն մինչ այդ քննարկենք այս փուլի անվանմանը վերաբերող հարցեր:

3.2. Դատախազական վերստուգման փուլի անվանումը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի անվանման մեջ «վերստուգում» տերմինի օգտագործումը տվյալ փուլի համար ունի հիմնավոր պատճառներ:

Նախ՝ բառարանային սահմանումների համաձայն՝ «վերստուգում» տերմինի «վեր» նախածանցը ցույց է տալիս կրկնություն՝ դարձյալ ստուգում կատարել[25] , նորից ստուգել, մանրամասնորեն և ուշադրությամբ ստուգել[26], հսկողական ստուգում կատարել[27]: «Վերստուգում» տերմինի օգտագործմամբ ընդգծվում է այս փուլում դատախազի հետագա (*ex post*) հսկողական գործունեության տարբերությունը նախաքննության օրինականության նկատմամբ ընթացիկ (*in cursu*) հսկողությունից:

Նախաքննության ընթացքում դատախազը ևս «ստուգում» է նախաքննության ընթացքը (օրինակ՝ պարբերաբար ծանոթանում է նյութերին, տալիս հանձնարարություններ): Սա ընթացիկ հսկողություն է, որը կատարվում է նախաքննությանը զուգահեռ: Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում դատախազը նախաքննության ավարտից հետո իրականացնում է հետագա (*ex post*) հսկողություն:

Երկրորդ՝ «վերստուգում» տերմինի օգտագործմամբ ընդգծվում է ստուգման ամբողջականությունը և եզրափակիչ բնույթը: Տվյալ փուլում դատախազը կատարում է ոչ թե հատվածական կամ պարբերական ստուգում, այլ վարույթի նյութերի ամբողջական և

[25] Բառգիրք հայերէն լեզուի: Անդրանիկ Վրդ. Կռանեան, Պէյրութ, 1998, էջ 439:

[26] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հատոր 4 (Մ-Շ), Հ. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ: Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., 1980, էջ 407:

[27] Աղայան Է. Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: Հատոր 2 (Ղ-Ֆ), Երևան, Հայաստան, 1976, էջ 1387:

համալիր վերլուծություն: Նա պետք է պարզի, օրինակ, ՀՀ ՔրԴՕ 204-րդ հոդվածով նախատեսված բոլոր հանգամանքները և կայացնի վերջնական որոշում:

Այսպիսով՝ այս փուլում դատախազը «կրկնակի ստուգում է» նախաքննության արդյունքները, սակայն այս անգամ ոչ թե ընթացիկ հսկողության կարգով, այլ ամբողջական վերստուգման միջոցով:

3.3. Դատախազական վերստուգման փուլի հատկանիշները

3.3.1. Ընդհանուր նկատառումներ

Ինչպես նշվեց, քրեական վարույթի որևէ ժամանակահատված (ընթացք) քրեական դատավարության փուլ է ճանաչվում՝ ելնելով առաջին հերթին դոկտրինում մշակված չափանիշներից՝ փուլի անմիջական խնդիր, սուբյեկտային կազմ, դատավարական ձևի առանձնահատկություն, փուլը եզրափակող ակտի առկայություն և այլն: Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն օժտված է դատավարության փուլերին հատուկ հատկանիշներով:

Նկատի ունենալով, որ դատախազական վերստուգման փուլը, ելնելով վերստուգման օբյեկտից, կարող է դրսևորվել դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման և քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևերով, ուստի նախ՝ կներկայացնեն դատախազական վերստուգման փուլի ընդհանուր հատկանիշները, այնուհետև՝ դրանք կմասնավորեցվեն դատախազական վերստուգման փուլի իրականացման երկու ձևերի՝ դատարանում մեղադրանքի հարուցման հարցի լուծման և քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևերի համար:

3.3.2. Դատախազական վերստուգման փուլի հատկանիշները

3.3.2.1. Փուլի խնդիրները և գործառույթները

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի գլխավոր խնդիրն է վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծության միջոցով ստուգել նախաքննության արդյունքների օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնել տվյալ փուլը եզրափակող որոշումներից մեկը: Այս գլխավոր խնդրից ածանցվում են անմիջական խնդիրները՝ ստուգել դատավարական ակտերի (մեղադրական եզրակացության կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշման) և վարույթի նյութերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Այս փուլի խնդիրներից բխում են տվյալ փուլի հետևյալ գործառույթները՝ վերահսկողական գործառույթը (ստուգել նախաքննության ընթացքում կատարված գործողությունների և կայացված որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը) և զտման (կանխարգելման) գործառույթը (բացառել այն վարույթներով նյութերը դատարան հանձնելը, որոնցով առկա չեն բավարար ապացույցներ կամ առկա են վարույթը կարճելու հիմքեր, կամ բացառել քրեական վարույթի անհիմն կամ անօրինական ավարտը՝ վարույթը կարճելու եղանակով): Բացի այդ, դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ժամանակ իրականացվում է նաև նախապատրաստական գործառույթ (դատական վարույթի համար նախապատրաստել անհրաժեշտ կազմակերպական նախադրյալներ):

3.3.2.2. Փուլի սուբյեկտային կազմը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազն է, ով օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի, այլ դատախազների (խմբային հսկողության դեպքում), ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ:

Դատախազը քննիչի հետ դատավարական հարաբերությունների մեջ է մտնում երկու առիթով՝ որպես վերստուգման օբյեկտ հանդիսացող վարույթի նյութերն *ընդունող* սուբյեկտ և որպես վարույթի նյութերը նախաքննության մարմին *ուղարկող* սուբյեկտ (երբ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը):

Եթե նախաքննության արդյունքների վերստուգումն իրականացվում է դատախազների խմբի կողմից, ապա խմբի անդամների և ղեկավարի միջև ծագում են դատավարական հարաբերություններ՝ կապված խմբի աշխատանքների համակարգման կամ ղեկավարման հետ, ինչպես օրինակ՝ խմբի անդամների միջև լիազորությունների բաշխման հետ (ՀՀ ՔրԴՕ 39.1-րդ հոդված, 39.2-րդ հոդված):

Դատախազը վարույթի մասնավոր մասնակիցների հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ հիմնականում միջնորդությունների քննարկման առիթով, իսկ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ժամանակ դատախազը

խափանման միջոց կիրառելիս կամ փոխելիս անմիջական շփումների մեջ է մտնում գրավատուի, երաշխավորի, դաստիարակչական հսկողություն ստանձնած անձի, զորամասի հրամանատարության ներկայացուցչի, մեղադրյալի աշխատավայրի վարչակազմի հետ:

3.3.2.3. Փուլի սկիզբը և ավարտը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն սկսվում է նախաքննության ավարտից հետո՝ համապատասխանաբար մեղադրական եզրակացությամբ կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշմամբ վարույթի նյութերը քննիչից ստանալու պահից:

Փուլն ավարտվում է դատախազի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի ընդունմամբ՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և դատարան հանձնելու (կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու) կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին որոշումը:

Փուլի ավարտից հետո ծագում են կամ կարող են ծագել դատավարական հարաբերություններ, որոնք դուրս են դատավարական փուլային կառուցվածքից, բայց կազմում են քրեադատավարական ընդհանուր համակարգի մաս (փուլի ավարտից հետո բողոքարկման վարույթները, որոշումներին ծանոթացնելու հարաբերությունները և այլն): Քրեադատավարական փուլային կառուցվածքից դուրս գտնվող հարաբերությունները պետք է համարել քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ»:

Դատավարության համակարգը փուլային սկզբունքով կառուցելու օրինաչափությունից նման շեղումները թույլատրելի են, քանի որ դրանցով լուծվում են ոչ թե փուլերին հատուկ անմիջական խնդիրներ, այլ խիստ որոշակի, կոնկրետ («տեղային») խնդիրներ: Օրինակ՝ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն ավարտվում է դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելով, սակայն դրանից հետո կարող է ծագել բողոքարկման վարույթ, եթե վարույթի մասնավոր մասնակիցը համաձայն չէ դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու հետ: Այս դեպքում մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել որոշումը վերադաս դատախազին (ՀՀ ՔրԴՕ 196-րդ հոդվածի 7-րդ մաս, 207-րդ հոդվածի

7-րդ մաս)։ Այս հարաբերությունները դատավարական են, սակայն դրանք դատավարության որևէ փուլի մաս չեն, քանի որ ծագում են դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո։

Այս հարաբերությունները դատավարական են, սակայն ծագում են նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի (դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումից) հետո։ Քանի որ այս դատավարական հարաբերությունները դուրս են դատավարության փուլային կառուցվածքից, ուստի դրանք պետք է համարել քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ»։ Ընդ որում՝ «գորշ գոտի» պիտակը որևէ կերպ չի նսեմացնում այդ հարաբերությունների արժեքը կամ նշանակությունը, պարզապես դրանով բնութագրվում է այդ հարաբերությունների յուրահատուկ տեղը քրեադատավարական համակարգում։

3.3.2.4. Փուլի դատավարական ձևը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի դատավարական ձևն ունի հետևյալ առանձնահատկությունները.

Առաջին՝ այն իրականացվում է ոչ հրապարակային (գրասենյակային) ընթացակարգով հիմնականում փաստաթղթերի ուսումնասիրության ձևով, առանց նիստ հրավիրելու և առանց վարույթի մասնակիցների մասնակցությամբ լսումներ կազմակերպելու։

Երկրորդ՝ որոշումները կայացվում են միանձնյա հսկող դատախազի կամ դատախազների խմբի ղեկավարի (անդամների) կողմից։

Երրորդ՝ այս փուլում ապացուցողական գործողություններ չեն կատարվում և ապացույցներ չեն հավաքվում. նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները դատախազը վերստուգում է հիմնականում ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով։

Չորրորդ՝ միջնորդությունների քննարկման հնարավորությունը սահմանափակ է և պայմանավորված փուլի խնդիրներով ու կարճ ժամկետով։ Օրինակ՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևում դատախազն օժտված է միջնորդություններն առանց քննության թողնելու հայեցողական լիազորությամբ, մինչդեռ քրեական վարույթի

կարճումը հաստատելու հարցի լուծման ձևում գործում է միջնորդությունների քննարկման ընդհանուր կանոնը:

3.3.2.5. Փուլի ժամկետը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլի համար օրենքով նախատեսված է յոթօրյա ժամկետ (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս, 207-րդ հոդվածի 6-րդ մաս), որն սկսվում է վերստուգման օբյեկտ հանդիսացող նյութերը դատախազի կողմից ստանալու պահից և ավարտվում դատախազի կողմից փուլը եզրափակող որոշումներից մեկի ընդունմամբ: Յոթօրյա ժամկետն առանձնանում է հստակությամբ (սկիզբը և ավարտը որոշակի են), կարճությամբ (պայմանավորված փուլի բնույթով) և անփոփոխելիությամբ (ենթակա չէ երկարաձգման, կասեցման կամ ընդհատման):

Փուլում գործում են երկու տարբեր բնույթի ժամկետներ՝ փուլի յոթօրյա ժամկետը և քրեական հետապնդման առավելագույն ժամկետը (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդված): Քննարկվող փուլի յոթօրյա ժամկետը պետք է տեղավորվի քրեական հետապնդման ժամկետի ներսում. եթե քրեական հետապնդման ժամկետի մնացորդը յոթ օրից պակաս է, ապա դատախազը պարտավոր է որոշում կայացնել այդ ավելի կարճ ժամկետում:

3.4. Դատախազական վերստուգման փուլի դրսևորման ձևերը

3.4.1. Դատախազական վերստուգման փուլի դրսևորման ձևերի ընդհանուր բնութագիրը

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը, կախված նրանից, թե քննիչը դատախազին ներկայացրել է մեղադրական եզրակացություն, թե վարույթը կարճելու մասին որոշում, ունի դրսևորման երկու ձև՝

1) դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումը,

2) քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծումը:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևի դեպքում դատախազական վերստուգման օբյեկտը մեղադրական եզրակացությունն է և վարույթի նյութերն են, իսկ առարկան՝ մեղադրական եզրակացության և վարույթի նյութերի իրավաչափությունը: Մեղադրական եզրակացության և վարույթի նյութերի իրավաչափության ստուգման գլխավոր խնդիրն է պարզել անձի նկատմամբ դատարանում մեղադրանք հարուցելու հիմքերի (պայմանների) առկայությունը:

Վ. Զելենեցկին նշում էր, որ նախնական քննության փուլում ձևավորվում և զարգացվում է քննչական մարմինների մեղադրանքը: Այդ մեղադրանքը պետական չէ, քանի որ վերջինս, օրենքի համաձայն, կարող է իրականացվել միայն դատախազի կողմից[28]:

«Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծում» անվանման մեջ օգտագործվում է «մեղադրանք հարուցել» ձևակերպումը, որի պայմաններում ծագում է մեղադրանք հարուցելու և քրեական հետապնդում հարուցելու հարաբերակցության հարցը: Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը, մեղադրական եզրակացության համեմատությամբ, արտացոլում է նախնական (սկզբնական) մեղադրանքը, քանի որ քրեական հետապնդում հարուցելուց հետո նախաքննությունը շարունակվում է, և դրա ընթացքում հնարավոր է ձեռք բերել նոր ապացույցներ, որոնց հիման վրա սկզբնական մեղադրանքը կարող է փոխվել: Մինչդատական վարույթում վերջնական մեղադրանքը ձևավորվում է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (այն վերակազմելու) մասին որոշում կայացնելով և վարույթի նյութերը դատարան հանձնելով: Այս առումով քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումն արտացոլում է միայն նախնական մեղադրանքը:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևի դեպքում դատախազական վերստուգման օբյեկտը վարույթը կարճելու մասին որոշումն է և վարույթի նյութերն են, իսկ առարկան՝ այդ որոշման և վարույթի նյութերի իրավաչափությունը: Քրեական վարույթը կարճելու մասին որոշման և վարույթի նյութերի իրավաչափության ստուգման գլխավոր խնդիրն է պարզել քրեական վարույթն ընդհանրապես եզրափակելու (ավարտելու) պայմանների առկայությունը:

Չնայած այս փուլը կարող է ունենալ իրականացման տարբեր ձևեր՝ կախված վերստուգման օբյեկտից, դրանց էությունը նույնն է: Երկու դեպքում էլ դատախազը, ստանալով ավարտված նախաքննության նյութերը, կատարում է նույն գործառույթը՝ վերստուգում է նախաքննության արդյունքների օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնում է վերջնական որոշումներից մեկը:

[28] Зеленецкий В. С. Возбуждение государственного обвинения в советском уголовном процессе. Харьков: Изд-во при Харьк. гос. ун-те, 1979. С. 12.

3.4.2. Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման վարույթի հատկանիշները

3.4.2.1. Խնդիրները և գործառույթները

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի գլխավոր խնդիրն է վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծության միջոցով պարզել, թե արդյոք առկա են անձի նկատմամբ դատարանում մեղադրանք հարուցելու հիմքեր (պայմաններ): «Հսկող դատախազն այս փուլում գնահատում է մեղադրյալի դատապարտման հավանականության մասին քննիչի հետևության հիմնավորվածությունը»[29], քանի որ քննիչը նախաքննությունն ավարտում է մեղադրական եզրակացություն կազմելով, եթե հանգում է եզրակացության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է (ՀՀ ՔրԴՕ 199-րդ հոդվածի 1-ին մաս):

Այս գլխավոր խնդրից ածանցվում են դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի հետևյալ անմիջական խնդիրները.

1) Ստուգել նախաքննության արդյունքների օրինականությունը և հիմնավորվածությունը: Դատախազը, քննիչից ստանալով մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը, պարտավոր է համակողմանիորեն ստուգել նախաքննության ամբողջ ընթացքը և արդյունքները: Մասնավորապես, դատախազը պետք է պարզի՝ արդյոք հավաքված ապացույցները վերաբերելի են և բավարար են մեղադրյալի մեղավորությունը դատարանում ապացուցելու համար, արդյոք մեղադրանքն ընդգրկում է ենթադրյալ հանցանքի բոլոր դրվագները, արդյոք ճիշտ է տրվել արարքի իրավական գնահատականը, արդյոք պահպանվել են նախաքննության կատարման կարգը սահմանող օրենսդրական բոլոր կանոնները, ինչպես նաև արդյոք կատարվել է համակողմանի և անաչառ նախաքննություն (ՀՀ ՔրԴՕ 204-րդ հոդված):

2) Ապահովել մեղադրական եզրակացության (մեղադրանքի) ձևի պատշաճությունը: Եթե դատախազը պարզում է, որ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում

[29] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 309-310:

օրենքի պահանջներին, կամ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին փաստեր կամ ի շահ մեղադրյալի՝ փոխել արարքի իրավական գնահատականը, ապա նա վերակազմում է մեղադրական եզրակացությունը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Միայն այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը համապատասխանում է բոլոր պահանջներին, և պատշաճ ձևակերպված մեղադրանքը պատրաստ է դատական քննության, դատախազը հաստատում է մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը հանձնում իրավասու դատարան (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդվածի 1-ին մաս):

3) Կանխել վարույթը կարճելու հիմքեր ունեցող վարույթներով դատարանում մեղադրանքի հարուցումը: Դատախազը պարտավոր է պարզել, թե արդյոք առկա են վարույթը կարճելու հիմքեր (ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդված): Եթե դատախազը հայտնաբերում է այդպիսի հիմքեր, նա վարույթի նյութերը վերադարձնում է նախաքննության մարմին՝ վարույթը կարճելու համար (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Այս կերպ դատախազը կանխում է նման վարույթներով մեղադրանքի հարուցումը դատարանում, ինչը թույլ է տալիս խնայել դատարանի ռեսուրսները և պաշտպանել անձանց անհիմն քրեական հետապնդումից:

Ասվածի հիման վրա կարելի է նշել, որ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն օժտված է դատավարության փուլերին հատուկ՝ նախապատրաստական և վերահսկողական հատկանիշներով. հաջորդող փուլի՝ նախնական դատալսումների համար նախապատրաստվում են անհրաժեշտ հիմքեր (նախապատրաստական հատկանիշ) և ստուգվում են նախաքննության փուլի ընթացքում կատարված գործողությունների, կայացված որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը (վերահսկողական հատկանիշ)[30]:

[30] «Մեղադրանք հարուցել» հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով, որն ընդգրկում է նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու ձևով դատարանում քրեական հետապնդում հարուցելու հարցի քննարկումը: ՀՀ ՔրԴՕ 426-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հավաքված ապացույցները համարելով բավարար՝ քննիչը, մեղադրական եզրակացությանը ներկայացվող վերաբերելի պահանջների պահպանմամբ, կազմում է եզրափակիչ ակտ կամ կայացնում է վարույթը կարճելու մասին որոշում՝ այն վարույթի նյութերի հետ անհապաղ հանձնելով հսկող դատախազին:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի խնդիրներից կարելի է բխեցնել նաև այս փուլի գործառույթները՝

1) Վերահսկողական գործառույթ. ստուգել նախաքննության ընթացքում հավաքված ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը և հավաստիությունը, ինչպես նաև ստուգել խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը:

2) Նախապատրաստական գործառույթ. ապահովել դատական վարույթի կազմակերպական նախապատրաստությունը: Օրինակ՝ դատախազն իրավասու է մեղադրական եզրակացությունը վերակազմել, ինչպես նաև կրճատել կամ լրացնել դատարանին հետազոտման համար ներկայացվող մեղադրանքի կողմի ապացույցների ցանկը:

3) Զտման գործառույթ. բացառել այն վարույթներով նյութերը դատարան հանձնելը, որոնցով առկա չեն բավարար ապացույցներ կամ առկա են վարույթը կարճելու հիմքեր:

3.4.2.2. Սուբյեկտային կազմը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազն է, ով այս փուլում օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի, այլ դատախազների (խմբային հսկողության դեպքում), ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ:

Դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ երկու առիթով.

Առաջին՝ քննիչը մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է հսկող դատախազին (ՀՀ ՔրԴՕ 203-րդ հոդվածի 1-ին մաս): Այս դեպքում դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերն *ընդունող* սուբյեկտ:

Երկրորդ՝ դատախազն իրավասու է վարույթի նյութերը վերադարձնել նախաքննության մարմին, եթե անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը, կազմել նոր մեղադրական

եզրակացություն կամ մեղադրանքը լրացնել սկզբնականից էապես տարբերվող փաստերով (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մաս)։ Այս դեպքում դատախազը կրկին քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես վարույթի նյութերն *ուղարկող* սուբյեկտ։

Եթե դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումն իրականացվում է դատախազների խմբի կողմից, ապա խմբի անդամների և ղեկավարի միջև ծագում են դատավարական հարաբերություններ՝ կապված խմբի աշխատանքների համակարգման կամ ղեկավարման հետ, օրինակ՝ խմբի անդամների միջև լիազորությունների բաշխման հետ (ՀՀ ՔրԴՕ 39.1-րդ հոդված, 39.2-րդ հոդված)։

Դատախազը վարույթի մասնավոր մասնակիցների հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ հետևյալ առիթներով.

Առաջին՝ վարույթի մասնավոր մասնակիցներն այս փուլում իրավունք ունեն միջնորդություններ ներկայացնել վարույթն իրականացնող դատախազին։ Թեև դատախազին վերապահվել է այդ միջնորդություններն «առանց քննության թողնելու» հայեցողական լիազորություն (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 3-րդ մաս), սակայն միջնորդության ներկայացման փաստն ինքնին դատախազի և միջնորդություն ներկայացրած անձի միջև առաջացնում է դատավարական հարաբերություն։

Երկրորդ՝ այս փուլում դատախազն իրավասու է որպես խափանման միջոց կիրառել գրավ, պաշտոնավարման կասեցում, բացակայելու արգելք, երաշխավորություն, դաստիարակչական հսկողություն, զինվորական հսկողություն (ՀՀ ՔրԴՕ 122-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ)։ Խափանման միջոց կիրառելիս կամ փոխելիս դատախազն անմիջական շփումների մեջ է մտնում որոշակի անձանց հետ, մասնավորապես, գրավ կիրառելիս՝ գրավատուի հետ (ՀՀ ՔրԴՕ 125-րդ հոդվածի 3-րդ մաս), երաշխավորություն կիրառելիս՝ երաշխավորի հետ (ՀՀ ՔրԴՕ 128-րդ հոդվածի 2-րդ մաս), դաստիարակչական հսկողություն կիրառելիս՝ ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի հետ (ՀՀ ՔրԴՕ 129-րդ հոդվածի 3-րդ մաս), զինվորական հսկողություն կիրառելիս՝ զորամասի հրամանատարության ներկայացուցչի հետ (ՀՀ ՔրԴՕ 130-րդ հոդվածի 2-րդ մաս), պաշտոնավարման կասեցում կիրառելիս՝ մեղադրյալի աշխատավայրի վարչակազմի և

մեղադրյալի հետ (ՀՀ ՔրԴՕ 126-րդ հոդվածի 3-րդ մաս), բացակայելու արգելք կիրառելիս՝ սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի և մեղադրյալի հետ (ՀՀ ՔրԴՕ 127-րդ հոդվածի 2-րդ մաս):

Բացի այդ, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշումն անհապաղ հանձնվում է խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին, իսկ դրա պատճենը՝ այն անձին, որի նկատմամբ կիրառվում է խափանման միջոցը (ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այս անձանց հետ դատախազը մտնում է անմիջական դատավարական հարաբերությունների մեջ՝ նրանց բացատրելով մեղադրանքի էությունը, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը (այն դեպքերում, երբ օրենքը դա պահանջում է):

3.4.2.3. Վարույթի սկիզբը և ավարտը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն սկսվում է նախաքննության փուլի ավարտից հետո, ավելի ճշգրիտ՝ մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը քննիչից ստանալու պահից:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն ավարտվում է հետևյալ որոշումներից մեկի ընդունմամբ.

1) մեղադրական եզրակացությունը հաստատելու և դատարան հանձնելու մասին որոշումը, կամ՝

2) վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին որոշումը:

Մեղադրական եզրակացությունը հաստատելու և վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազի ակտով դատախազը համարվում է իր լիազորություններն ամբողջությամբ իրականացրած:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո ծագում են (կարող են ծագել) կազմակերպական կամ դատական երաշխիքների հետ կապված վարույթներ, որոնք թեև

դուրս են դատավարական փուլային համակարգից, բայց համարվում են դատավարական հարաբերություններ և կազմում են քրեադատավարական ընդհանուր համակարգի մաս: Մասնավորապես.

1) Դատական երաշխիքների վարույթը, որն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ դատարանը, ստանալով քրեական գործը, արձանագրում է, որ մեղադրական եզրակացությունը դատարան է հանձնվել ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ, այսինքն՝ կալանավորված մեղադրյալի դեպքում կալանքի առավելագույն (ընդհանուր) ժամկետը դեռ չի լրացել, սակայն գործը դատարան է հանձնվել կալանքի ժամկետը լրանալուց 15 օրից պակաս ժամկետում: Այդ դեպքում դատարանը, առանց նախնական դատալսումներ անցկացնելու մասին որոշում կայացնելու, քրեական գործը վերադարձնում է հսկող դատախազին՝ խափանման միջոցի հարցը քննարկելու և գործը կրկին դատարան հանձնելու նպատակով (ՀՀ ՔրԴՕ 310-րդ հոդվածի 3-րդ մաս): Եթե դատախազը կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դիմում է դատարան, ապա ծագում է դատական երաշխիքների վարույթ: Այս հարաբերությունները դատավարական են, սակայն ծագում են դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծումից հետո: Ընդ որում՝ այս դեպքում նախաքննության փուլը կամ նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլը չեն վերսկսվում (այս մասին՝ հաջորդիվ):

2) Տեղեկացման պարտականությունը, ըստ որի՝ դատախազը պարտավոր է գրավոր տեղեկացնել վարույթի մասնավոր մասնակիցներին վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները (ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս հարաբերությունները կազմակերպական են և ծագում են դատարանում մեղադրանք հարուցելու հարցը լուծելուց հետո:

Ինչպես նշվեց, այս հարաբերությունները թեև դատավարական են, սակայն դրանք դուրս են դատավարության փուլային կառուցվածքից, ուստի դրանք պետք է համարել քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ»: Ընդ որում՝ «գորշ գոտի» պիտակը չի նսեմացնում այդ հարաբերությունների արժեքը կամ նշանակությունը,

պարզապես դրանով բնութագրվում է այդ հարաբերությունների յուրահատուկ տեղը քրեադատավարական համակարգում:

3.4.2.4. Դատավարական ձևը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի դատավարական ձևն ունի որոշակի առանձնահատկություններ:

Առաջին՝ այս փուլում վարույթն իրականացվում է ոչ հրապարակային (գրասենյակային) եղանակով: Հսկող դատախազն իր լիազորություններն իրականացնում է հիմնականում փաստաթղթերի ուսումնասիրության ձևով՝ առանց նիստ հրավիրելու, առանց վարույթի մասնակիցների մասնակցությամբ լսումներ կազմակերպելու և առանց հրապարակային ընթացակարգի:

Բացառություն է կազմում խափանման միջոցի կիրառումը: Խափանման միջոց կիրառելիս դատախազն անմիջական շփումների մեջ է մտնում համապատասխան անձանց հետ (ՀՀ ՔրԴՕ 125-130-րդ հոդվածներ):

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ոչ հրապարակային բնույթը պետք է տարբերել նախաքննության փուլում գործող նախաքննության տվյալների հրապարակման արգելքից (ՀՀ ՔրԴՕ 186-րդ հոդված): Վերջինս վերաբերում է նախաքննության փուլում հավաքված տվյալների՝ երրորդ անձանց հրապարակելու անթույլատրելիությանը, մինչդեռ այս փուլի «ոչ հրապարակային ընթացակարգը» վերաբերում է դատախազի գործունեության իրականացման ձևին՝ առանց նիստ հրավիրելու կամ լսումներ կազմակերպելու: Ավելին՝ ՀՀ ՔրԴՕ 186-րդ հոդվածով սահմանված նախաքննության տվյալների հրապարակման արգելքն իր բնույթով չի կարող վերաբերել դատախազական վերստուգման փուլին: Պատճառն այն է, որ նախաքննության ավարտին վարույթի մասնավոր մասնակիցներն արդեն իսկ ծանոթացել են վարույթի նյութերին (ՀՀ ՔրԴՕ 200-րդ հոդված): Այս փուլում դատախազի գործունեությունն իրականացվում է արդեն իսկ վարույթի մասնավոր մասնակիցներին հայտնի դարձած տվյալների հիման վրա:

Երկրորդ՝ այս փուլում որոշումները կայացվում են միանձնյա: Անհատական դատախազական հսկողության դեպքում բոլոր որոշումները (մեղադրական եզրակացության հաստատում, վերակազմում, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը, խափանման միջոցի փոփոխություն, ապացույցների ցանկի լրացում կամ կրճատում) ընդունում է հսկող դատախազը միանձնյա: Խմբային հսկողության դեպքում ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված լիազորությունների շրջանակում (մեղադրական եզրակացության հաստատում, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը[31]) որոշումներն ընդունում է բացառապես դատախազների խմբի ղեկավարը միանձնյա, իսկ մյուս լիազորությունների դեպքում (օրինակ՝ վարույթի մասնակիցների ներկայացրած միջնորդությունների քննարկման դեպքում) որոշումները կարող են ընդունվել խմբի անդամների կողմից միանձնյա՝ խմբի ղեկավարի սահմանած շրջանակներում (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդված):

Երրորդ՝ այս փուլում ապացուցողական գործողություններ չեն կատարվում և ապացույցներ չեն հավաքվում, իսկ նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները դատախազը վերստուգում է հիմնականում ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Չորրորդ՝ այս փուլում առկա է միջնորդությունների քննարկման սահմանափակ հնարավորություն, որը պայմանավորված է այս փուլի խնդիրներով և կարճ ժամկետով: ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

---

[31] Մեղադրական եզրակացությունը հաստատելը (ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ) և այն չհաստատելը (նույն հոդվածի 16-րդ կետ) դասվել են դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունների շարքին (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 3-րդ մաս): Սակայն մեղադրական եզրակացությունը վերակազմելու լիազորությունը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), որը դատավարության նույն փուլում (նախաքննության արդյունքների դատախազական վերստուգում՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով) կիրառելի երրորդ լիազորությունն է, բաց է թողնվել դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունների ցանկից:

Սա ոչ թե օրենսդրի գիտակցված լռության, այլ օրենսդրական բացթողման արդյունք է: Ծայրահեղ անտրամաբանական կլիներ պնդել, որ մեղադրական եզրակացությունը հաստատելը դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորությունն է, իսկ մեղադրական եզրակացությունը վերակազմելու լիազորությունը ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա կարող է իրականացվել դատախազների խմբի ցանկացած անդամի կողմից: Մեղադրական եզրակացությունը վերակազմելը համակարգային առումով առավել մոտ է ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ կետերով, 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորություններին, քան ընդհանուր «այլ» լիազորություններին:

Հաշվի առնելով առկա օրենսդրական բացթողումը, *extra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա մեղադրական եզրակացությունը վերակազմելը ևս պետք է համարել դատախազների խմբի ղեկավարի բացառիկ լիազորություն:

«Մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի մասին՝ վարույթի մասնավոր մասնակիցներին ծանուցելուց հետո քննիչին և հսկող դատախազին ուղղված նրանց միջնորդությունները կարող են թողնվել առանց քննության, որը ենթակա չէ բողոքարկման»:

Այս իրավական կարգավորումը ենթադրում է, որ դատախազը տվյալ փուլում օրենսդրորեն ազատված չէ միջնորդությունները քննարկելու պարտականությունից, սակայն նրան վերապահված է հայեցողական լիազորություն՝ դրանք թողնել առանց քննության: Այս հայեցողական լիազորությունը չի նշանակում դատախազի ազատություն՝ ըստ իր սուբյեկտիվ ցանկության, կամայականորեն (առանց պատճառաբանության) թողնել միջնորդությունն առանց քննության: Եթե միջնորդությունը կարող է քննարկվել սահմանափակ յոթօրյա ժամկետում, և դրա լուծումը բխում է այս փուլի խնդիրներից, ապա այն պետք է քննարկվի այս փուլում: Օրինակ՝ եթե պաշտպանը միջնորդում է անթույլատրելի ճանաչել ակնհայտորեն ապօրինի եղանակով ձեռք բերված ապացույցը, ապա դատախազը պետք է քննարկի այդ միջնորդությունը և կայացնի համապատասխան որոշում:

3.4.2.5. Վարույթի ժամկետը

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի համար օրենքով նախատեսված է յոթօրյա ժամկետ, որն սկսվում է այն պահից, երբ դատախազը քննիչից ստանում է մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը և ավարտվում է դատախազի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի ընդունմամբ (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս): Այս փուլի համար նախատեսված յոթօրյա ժամկետն առանձնանում է հետևյալ հատկանիշներով.

1) *Հստակություն.* յոթօրյա ժամկետի սկիզբը (մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը դատախազի կողմից ստանալու պահը) և ավարտը (դատախազի կողմից որոշումներից մեկի ընդունումը) ունեն օրենսդրական որոշակիություն:

2) *Կարճություն.* յոթ օրը էապես կարճ ժամկետ է, ինչը պայմանավորված է այս փուլի բնույթով և խնդիրներով:

3) *Անփոփոխելիություն*. յոթօրյա ժամկետը ենթակա չէ երկարաձգման, կասեցման կամ ընդհատման: Այն կոշտ ժամկետ է, որը պետք է պահպանվի դատախազի կողմից:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում գործում են երկու տարբեր բնույթի ժամկետներ.

1) տվյալ փուլի յոթօրյա ժամկետը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս),

2) քրեական հետապնդման առավելագույն ժամկետը (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդված):

Եթե նախաքննության ընթացքում հարուցվել է քրեական հետապնդում, ապա մինչդատական վարույթը պետք է ավարտվի մինչև քրեական հետապնդման առավելագույն ժամկետը լրանալը (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի 1-ին մաս): Քրեական հետապնդման ժամկետն ամբողջ մինչդատական վարույթի համար նախատեսված առավելագույն ժամկետն է, որի ընթացքում պետք է ավարտվի նախաքննությունը, մեղադրական եզրակացությունը հաստատվի դատախազի կողմից, և գործն ուղարկվի դատարան:

Եթե լրացել է օրենքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետը, և դատախազն այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը չի հանձնել դատարան, ապա դա քրեական հետապնդումը բացառող հանգամանք է (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ): Այս կարգավորումից բխում է, որ քրեական հետապնդման ժամկետները վերաբերում են ոչ միայն նախաքննության փուլին, այլև նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլին: Այլ կերպ ասած՝ եթե դատախազն ստանում է վարույթի նյութերը, սակայն մինչև ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածով սահմանված առավելագույն ժամկետը լրանալը չի հասցնում հաստատել մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը հանձնել դատարան, ապա առաջանում է քրեական հետապնդումը դադարեցնելու պարտականություն:

Դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման վարույթում քրեական հետապնդման ժամկետները գործում են հետևյալ կերպ. դատախազը պետք է իր յոթօրյա ժամկետում կայացնի որոշումներից մեկը՝ հաշվի առնելով քրեական հետապնդման առավելագույն ժամկետի մնացորդը (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մաս): Այս համատեքստում կարևոր է նշել, որ դատախազի յոթօրյա ժամկետը պետք է տեղավորվի քրեական հետապնդման ժամկետի ներսում. եթե քրեական հետապնդման ժամկետի

մնացորդը քննարկվող փուլի համար նախատեսված յոթօրյա ժամկետից պակաս է, ապա դատախազը պարտավոր է փուլը եզրափակող որոշում կայացնել քրեական հետապնդման ժամկետում: Եթե դատախազը որոշում է վարույթի նյութերը վերադարձնել նախաքննության մարմին (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), ապա այդ վերադարձը չի կասեցնում կամ չի ընդհատում քրեական հետապնդման ժամկետի հոսքը, քանի որ դատախազի կողմից նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ ընդհատելու հիմք չէ (ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի 5-րդ մաս, 193-րդ հոդված):

3.4.3. Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման վարույթի հատկանիշները

3.4.3.1. Խնդիրները և գործառույթները

Քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալուց հետո դատախազի գործունեությունն օժտված է քրեական դատավարության փուլերին հատուկ հատկանիշներով: Դատախազի գործունեության անմիջական խնդիրն է ստուգել քրեական վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը:

Ի տարբերություն դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման, որտեղ դատախազը քննարկում է մեղադրական եզրակացությունը հաստատելու հարցը, քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում դատախազը քննարկում է քննիչի կողմից կայացված վարույթը կարճելու որոշումը հաստատելու հարցը:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի գլխավոր խնդիրն է վարույթի նյութերի ամբողջական և համալիր վերլուծության միջոցով պարզել, թե արդյոք առկա են քրեական վարույթն ընդհանրապես եզրափակելու (ավարտելու) պայմանները: Այս գլխավոր խնդրից ածանցվում են քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի հետևյալ անմիջական խնդիրները.

1) Ստուգել նախաքննության արդյունքների օրինականությունը և հիմնավորվածությունը (բովանդակության ստուգում): Դատախազը, քննիչից ստանալով քրեական վարույթը

կարճելու մասին որոշումը, պարտավոր է ստուգել, թե արդյոք առկա է ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդվածով նախատեսված վարույթը կարճելու հիմքերից որևէ մեկը: Մասնավորապես, դատախազը պետք է պարզի՝ արդյոք քննիչի կողմից հաստատված փաստական հանգամանքները և դրանք հաստատող ապացույցները բավարար են վարույթը կարճելու համար, արդյոք ճիշտ է կիրառվել իրավական հիմքը, արդյոք պահպանվել են նախաքննության կատարման կարգը սահմանող օրենսդրական բոլոր կանոնները (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 5-րդ մաս, 13-րդ հոդված): Ստուգման արդյունքում դատախազը եզրակացնում է, թե արդյոք քննիչի կողմից վարույթը կարճելու որոշումն օրինական է և հիմնավորված: Այս կերպ դատախազը կանխում է քրեական վարույթի՝ անհիմն կամ անօրինական կարճման դեպքերը:

2) Ստուգել քրեական վարույթը կարճելու մասին որոշման ձևի պատշաճությունը (ձևի ստուգում): Դատախազը պարտավոր է նաև ստուգել, թե արդյոք քրեական վարույթը կարճելու մասին որոշման ձևը (կառուցվածքը) համապատասխանում է օրենքի պահանջներին: Մասնավորապես, դատախազը պետք է պարզի, արդյոք որոշման մեջ շարադրված են բոլոր անհրաժեշտ տարրերը (փաստական հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները, իրավական հիմնավորումները, արգելադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինմանն առնչվող հարցերը, որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները): Եթե դատախազը պարզում է, որ որոշումը էական հարցերում չի համապատասխանում օրենքի պահանջներին (օրինակ՝ բացակայում է իրավական հիմնավորումը, կամ չեն լուծվել ապացույցների պահպանման կամ տնօրինման հարցերը), ապա նա վարույթի նյութերը վերադարձնում է նախաքննության մարմնին՝ որոշումը պատշաճ ձևակերպելու համար: Միայն այն դեպքում, երբ որոշումը համապատասխանում է բոլոր պահանջներին, դատախազը հաստատում է այն (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 6-րդ մաս):

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի խնդիրներից կարելի է բխեցնել նաև այս փուլի գործառույթները՝

1) Վերահսկողական գործառույթ. ստուգել քննիչի կողմից վարույթը կարճելու որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ ներառյալ ապացույցների պատշաճությունը, բավարարությունը և իրավական հիմքերի ճիշտ կիրառումը:

2) Կանխարգելիչ գործառույթ. բացառել քրեական վարույթի անհիմն կամ անօրինական ավարտը վարույթը կարճելու ճանապարհով:

Ի տարբերություն դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման՝ քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլը չունի նախապատրաստական գործառույթ, քանի որ այստեղ խոսքը վերաբերում է քրեական վարույթի ավարտին, այլ ոչ թե դատական քննության նախապատրաստմանը:

3.4.3.2. Սուբյեկտային կազմը

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում վարույթն իրականացնող մարմինը հսկող դատախազն է, ով այս փուլում օժտված է որոշումներ կայացնելու բացառիկ լիազորություններով, սակայն նա այս փուլի միակ սուբյեկտը չէ: Դատախազը դատավարական հարաբերությունների մեջ է մտնում քննիչի, այլ դատախազների (խմբային հսկողության դեպքում), ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների հետ:

Դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ երկու առիթով.

Առաջին՝ քննիչը նախաքննության ավարտի մասին ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին և վարույթի նյութերին ծանոթանալուց հետո կազմում է քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և այն ներկայացնում հսկող դատախազին (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 1-ին մաս): Այս դեպքում դատախազը քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և վարույթի նյութերն *ընդունող* սուբյեկտ:

Երկրորդ՝ դատախազն իրավասու է վարույթի նյութերը վերադարձնել նախաքննության մարմին, եթե պարզում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը (ՀՀ ՔրԴՕ 207-

րդ հոդվածի 6-րդ մաս)։ Այս դեպքում դատախազը կրկին քննիչի հետ մտնում է դատավարական հարաբերությունների մեջ՝ որպես վարույթի նյութերն *ուղարկող* սուբյեկտ։

Եթե քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծումն իրականացվում է դատախազների խմբի կողմից, ապա խմբի անդամների և ղեկավարի միջև ծագում են դատավարական հարաբերություններ՝ կապված խմբի աշխատանքների համակարգման կամ ղեկավարման հետ, օրինակ՝ խմբի անդամների միջև լիազորությունների բաշխման հետ (ՀՀ ՔրԴՕ 39.1-րդ հոդված, 39.2-րդ հոդված)։

Դատախազը վարույթի մասնավոր մասնակիցների (մեղադրյալ, տուժող, պաշտպան, օրինական ներկայացուցիչ և այլն) հետ այս փուլում չունի անմիջական շփումներ՝ նրանց մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու ձևով։ Սակայն դա չի նշանակում, որ նրանց հետ դատավարական հարաբերություններ չեն ծագում։ Այսպես՝ վարույթի մասնավոր մասնակիցներն այս փուլում ևս իրավունք ունեն միջնորդություններ ներկայացնել վարույթն իրականացնող դատախազին։ Ի տարբերություն դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծմանը, որտեղ դատախազն օժտված է միջնորդություններն առանց քննության թողնելու հայեցողական լիազորությամբ (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 3-րդ մաս), քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում գործում է ընդհանուր կանոնը. Դատախազը՝ որպես վարույթն իրականացնող մարմին, պարտավոր է այդ խնդիրներով և կարճ ժամկետով պայմանավորված սահմանափակումների շրջանակում քննել միջնորդությունները (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 2-րդ մաս)։ Միջնորդության ներկայացման փաստն ինքնին դատախազի և միջնորդություն ներկայացրած անձի միջև առաջացնում է դատավարական հարաբերություն։

3.4.3.3. Վարույթի սկիզբը և ավարտը

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն սկսվում է նախաքննության փուլի ավարտից հետո։ Ավելի ճշգրիտ՝ այն սկսվում է քրեական վարույթը կարճելու մասին որոշումը վարույթի նյութերի հետ միասին քննիչից ստանալու պահից։

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի վարույթն ավարտվում է հետևյալ որոշումներից մեկի ընդունմամբ.

1) քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելը, կամ՝

2) վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլն ավարտվում է դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու պահին, այլ ոչ թե որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահին: Օրինական ուժի մեջ մտնելը տեղի է ունենում ավելի ուշ՝ բողոքարկման ժամկետը լրանալուց կամ բողոքարկումից հետո որոշումը վերջնականապես հաստատվելուց հետո (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 11-րդ մաս): Այսինքն՝ փուլն ավարտվում է դատախազի կողմից որոշում կայացնելու պահին, իսկ որոշման օրինական ուժի մեջ մտնելը տեղի է ունենում արդեն փուլի ավարտից հետո:

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո (որոշումը հաստատումից մինչև օրինական ուժի մեջ մտնելը) ծագում են (կարող են ծագել) կազմակերպական կամ բողոքարկման վարույթներ, որոնք թեև դուրս են դատավարական փուլային համակարգից, բայց համարվում են դատավարական հարաբերություններ և կազմում են քրեադատավարական ընդհանուր համակարգի մաս: Մասնավորապես.

1) Բողոքարկման վարույթը, որը ծագում է այն դեպքում, երբ վարույթի մասնավոր մասնակիցը համաձայն չէ դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելու հետ: Այս դեպքում մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել որոշումը վերադաս դատախազին (ՀՀ ՔրԴՕ 196-րդ հոդվածի 7-րդ մաս, 207-րդ հոդվածի 7-րդ մաս): Այս հարաբերությունները դատավարական են, սակայն ծագում են քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի ավարտից հետո:

2) Տեղեկացման պարտականությունը, ըստ որի՝ քննիչը դատախազի կողմից քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատելուց հետո վարույթի մասնավոր

մասնակիցներին տեղեկացնում է կայացված որոշման մասին (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 7-րդ մասի և 196-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն): Տեղեկացումը տեղի է ունենում փուլի ավարտից հետո:

Ավելին, օրենքով նախատեսվել է նաև քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման թերությունները հսկող դատախազի որոշմամբ լուծելու հնարավորություն, եթե դրանց լուծումը չի փոխում որոշման էությունը (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 13-րդ մասի): Այս պարագայում նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլն ավարտվել է, սակայն օրենքով հսկող դատախազին տրվել է դատավարական որոշում կայացնելու հնարավորություն:

Ինչպես նշվեց, այս հարաբերությունները քրեադատավարական ընդհանուր համակարգի «գորշ գոտիներ» են:

3.4.3.4. Դատավարական ձևը

Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի դատավարական ձևն ունի որոշակի առանձնահատկություններ:

Առաջին՝ այս փուլն իրականացվում է ոչ հրապարակային (գրասենյակային) ընթացակարգով՝ հիմնականում փաստաթղթերի ուսումնասիրության ձևով՝ առանց նիստ հրավիրելու, առանց վարույթի մասնակիցների մասնակցությամբ լսումներ կազմակերպելու և առանց հրապարակային ընթացակարգի:

Երկրորդ՝ այս փուլում որոշումները կայացվում են միանձնյա: Անհատական դատախազական հսկողության դեպքում բոլոր որոշումները (քրեական վարույթը կարճելու մասին որոշման հաստատումը, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը) ընդունում է հսկող դատախազը միանձնյա: Խմբային հսկողության դեպքում ՀՀ ՔրԴՕ 38-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված լիազորությունների շրջանակում (քրեական վարույթը կարճելու մասին որոշման հաստատում, վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը) որոշումներն ընդունում է բացառապես դատախազների խմբի ղեկավարը միանձնյա, իսկ այլ լիազորությունների դեպքում (օրինակ՝ վարույթի մասնակիցների ներկայացրած

միջնորդությունների քննարկման դեպքում) որոշումները կարող են ընդունվել խմբի անդամների կողմից միանձնյա՝ խմբի ղեկավարի սահմանած շրջանակներում (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Երրորդ՝ այս փուլում ապացուցողական գործողություններ չեն կատարվում և ապացույցներ չեն հավաքվում, իսկ նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները դատախազն ստուգում է հիմնականում ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Չորրորդ՝ ինչպես նշվեց, այս փուլում գործում է միջնորդությունների քննարկման ընդհանուր կանոնը՝ դատախազը պարտավոր է տվյալ փուլին հատուկ սահմանափակումների (դատավարական ռեժիմի) շրջանակում քննել միջնորդությունները (ՀՀ ՔրԴՕ 154-րդ հոդվածի 2-րդ մաս): Համեմատության համար նշենք, որ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլում դատախազն իրավասու է միջնորդությունները թողնել առանց քննության, քանի որ միջնորդություններում առաջադրված հարցերը (օրինակ՝ ապացույցն անթույլատրելի ճանաչելը) կարող են քննարկվել նաև դատական վարույթի ընթացքում: Մինչդեռ, քրեական վարույթի կարճումը հաստատելու փուլում դատախազի կողմից որոշումը հաստատելուց հետո քրեական վարույթն ավարտվում է (եթե որոշումը չի բողոքարկվում կամ բողոքարկումից հետո մնում է ուժի մեջ), ուստի այս փուլում միջնորդություններով առաջադրված հարցերը հետագա դատական վարույթի ընթացքում քննարկվելու հնարավորություն չունեն:

Այս փուլում վարույթի մասնավոր մասնակիցները կարող են ներկայացնել մասնավորապես հետևյալ միջնորդությունները.

Առաջին՝ միջնորդություններ՝ կապված կարճման հիմքերի բացակայության հետ: Եթե մասնավոր մասնակիցը կարծում է, որ քննիչի կողմից վարույթը կարճելու որոշումն անհիմն է (այսինքն՝ ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկն առկա չէ), նա կարող է միջնորդել դատախազին վերադարձնել նյութերը նախաքննության մարմնին՝ նախաքննությունը շարունակելու համար:

Երկրորդ՝ միջնորդություններ՝ կապված որոշման ձևական խախտումների հետ: Եթե քրեական վարույթը կարճելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին (օրինակ՝ չեն լուծվել արգելադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինման վերաբերյալ հարցերը): Միջնորդությունները կարող են վերաբերել նաև վարութային ծախսերի բաշխմանը:

3.4.3.5. Վարույթի ժամկետը

Քրեական դատավարության փուլի ինքնուրույնության հատկանիշներից է այդ փուլի համար օրենսդրորեն սահմանված ժամկետների առկայությունը: Քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծման ձևով դրսևորվող դատախազական վերստուգման փուլի համար օրենքով նախատեսված է յոթօրյա հստակ ժամկետ, որն սկսվում է այն պահից, երբ դատախազը քննիչից ստանում է քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և ավարտվում է դատախազի կողմից օրենքով նախատեսված որոշումներից մեկի ընդունմամբ (ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 6-րդ մաս):

Յոթօրյա ժամկետն առանձնանում է հստակությամբ (սկիզբը և ավարտը որոշակի են), կարճությամբ (պայմանավորված փուլի բնույթով) և անփոփոխելիությամբ (ենթակա չէ երկարաձգման, կասեցման կամ ընդհատման):

§ 4. Դատախազի կարգավիճակը նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատախազին վերապահված է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողական գործառույթ՝ առանց քննչական գործողություններ կատարելու լիազորության: Մյուս կողմից՝ ՀՀ ՔրԴՕ 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով դատախազը համարվում է վարույթն իրականացնող մարմին՝ մեղադրական եզրակացությունը կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշումը քննիչից ստանալու պահից մինչև մեղադրական եզրակացությունը դատարան հանձնելը, քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը հաստատելը կամ վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելը: Այս նորմերի համադրությունից պարզ է դառնում, որ դատախազն այս փուլում ունի երկակի կարգավիճակ (*status duplex*)՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հսկողություն

իրականացնող մարմին, թե՛ որպես վարույթն իրականացնող մարմին: Այս երկակիությունը բնորոշ է նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլին, քանի որ դատախազը համատեղում է ինչպես հետագա (*ex post*) հսկողության, այնպես էլ որպես վարույթն իրականացնող մարմին առաջնային որոշումներ կայացնելու լիազորությունները:

Դատախազի՝ որպես հսկողություն իրականացնող մարմնի լիազորություններն են՝

1) հաստատել մեղադրական եզրակացությունը

2) վերակազմել մեղադրական եզրակացությունը,

3) վերադարձնել վարույթի նյութերը նախաքննության մարմին,

4) հաստատել քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը:

Դատախազի՝ որպես վարույթն իրականացնող մարմնի լիազորություններից են՝

1) կիրառել համապատասխան դատավարական սանկցիաներ,

2) կիրառել հատուկ պաշտպանության միջոցներ,

3) լուծել վարույթի մասնակիցների ներկայացրած միջնորդությունները,

4) հաստատել ապացույցի անթույլատրելիությունը կամ օրենքով սահմանված կարգով ստացված ապացույցի օգտագործման արգելքը:

Հարկ է նշել, որ դատախազի՝ որպես հսկողություն իրականացնող և միաժամանակ վարույթն իրականացնող մարմնի լիազորությունների տարանջատումը որոշ չափով պայմանական է: Իրականում այս երկու գործառույթները փոխներթափանցում են, իսկ դատախազին վերապահված լիազորությունները հաճախ միաժամանակ կրում են ինչպես հսկողական, այնպես էլ առաջնային վարութային բնույթ: Օրինակ՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու լիազորությունը թեև իր էությամբ հսկողական գործառույթի դրսևորում է, սակայն այն նաև այս փուլում կայացվող առաջնային վարութային որոշում է: Այս առումով դատախազի կարգավիճակը ոչ թե երկու իրարամերժ դերերի գումար է, այլ իրավական ինստիտուտների սինթեզ, որտեղ հսկողությունն իրականացվում է վարույթն իրականացնելու լիազորությունների շրջանակում, իսկ վարութային որոշումները կայացվում են հսկողական արդյունքների հիման վրա:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նախաքննության արդյունքների դատախազական վերստուգման փուլում դատախազի կարգավիճակի երկակիությունը հակասում է ՀՀ

Սահմանադրությանը: Իրականում նման հակասություն առկա չէ, քանի որ վարույթն իրականացնելու մասին դատավարական նորմը դատախազին չի վերապահում քննության գործառույթ: Դատախազը՝ որպես վարույթն իրականացնող մարմին, օժտված է ոչ քննչական բնույթի ինքնուրույն որոշումներ կայացնելու (ապացուցողական գործողություններ կատարելու) լիազորություններով: Ուստի այս փուլում քննության և հսկողության գործառույթները չեն միախառնվում:

Այսպիսով՝ դատախազի երկակի կարգավիճակը (*status duplex*)՝ որպես միաժամանակ հսկողություն իրականացնող և վարույթն իրականացնող մարմին, նախաքննության արդյունքների վերստուգման փուլի առանձնահատկությունն է, որտեղ դատախազը համատեղում է ինչպես հետագա (*ex post*) հսկողության, այնպես էլ ոչ քննչական բնույթի որոշումներ կայացնելու լիազորությունները:

Եզրակացություններ

Նախաքննության արդյունքների դատախազական վերստուգումը քրեական դատավարության ինքնուրույն փուլ է, քանի որ այն բավարարում է փուլին ներկայացվող բոլոր դոկտրինալ չափանիշներին:

Դատախազական վերստուգման փուլն ունի դրսևորման երկու ձև՝ դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծում (երբ քննիչը ներկայացնում է մեղադրական եզրակացություն) և քրեական վարույթի կարճումը հաստատելու հարցի լուծում (երբ ներկայացվում է քրեական վարույթը կարճելու մասին որոշում): Երկու դեպքում էլ դատախազը կատարում է նույն գլխավոր գործառույթը՝ վերստուգում է նախաքննության արդյունքները և կայացնում վերջնական որոշում:

Դատախազի կարգավիճակն այս փուլում երկակի է (status duplex)՝ նա միաժամանակ հանդես է գալիս որպես հսկողություն իրականացնող մարմին (ստուգում է նախաքննության օրինականությունը) և որպես վարույթն իրականացնող մարմին (ինքնուրույն որոշումներ է կայացնում խափանման միջոցի, միջնորդությունների, մեղադրական եզրակացության հաստատման կամ վերակազմման): Այս երկակիությունը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ դատախազին չի վերապահվում ապացուցողական գործողություններ կատարելու լիազորություն:

Քրեադատավարական համակարգում առկա են նաև հարաբերություններ, որոնք դուրս են գտնվում դատավարության փուլային կառուցվածքից, սակայն ունեն դատավարական բնույթ: Դրանք ձևավորում են քրեադատավարական ընդհանուր համակարգի այսպես կոչված «գորշ գոտիներ»: «Գորշ գոտիների» առկայությունը թույլատրելի է, քանի որ դրանցով լուծվում են ոչ թե փուլերին հատուկ անմիջական խնդիրներ, այլ խիստ որոշակի, կոնկրետ («տեղային») խնդիրներ: Այս հարաբերությունները չեն նսեմացնում դատավարական համակարգի արժեքը, այլ ընդգծում են դրանց յուրահատուկ տեղը քրեադատավարական ընդհանուր համակարգում:

PROSECUTORIAL REVIEW OF THE RESULTS OF PRE-TRIAL INVESTIGATION AS A STAGE OF CRIMINAL PROCEEDINGS

GHAMBARYAN ARTUR
Head of the Chair of Theory of Law and Constitutional Law,
Russian-Armenian University, Professor at the Chair of Law,
Public Administration Academy of the Republic of Armenia,
Doctor of Science in Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia

Abstract. The article substantiates that the pre-trial proceedings in criminal procedure consist of two relatively independent stages: the stage of preliminary investigation and the stage of prosecutorial review of the results of preliminary investigation. The author criticizes the approach according to which the prosecutor's activity after the completion of preliminary investigation is considered as a final part of the preliminary investigation stage. By analyzing doctrinal criteria (the immediate task of the stage, the subject composition, the procedural form, the time limits, the act concluding the stage), the author demonstrates that the prosecutorial review possesses all the characteristics inherent to a stage of criminal proceedings.

The comparative legal analysis (Latvia, Bulgaria, China, Spain) has shown that in different legal systems, the prosecutor's activity after the completion of investigation is considered as an independent stage of proceedings.

In the criminal procedure of the Republic of Armenia, the stage of prosecutorial review of the results of preliminary investigation has two forms of manifestation, depending on which act the investigator has submitted to the prosecutor: 1) resolution of the issue of instituting charges in court (when an indictment is submitted), 2) resolution of the issue of confirming the termination of criminal proceedings (when a decision to terminate the proceedings is submitted). In both cases, the prosecutor performs the same main function – reviews the results of preliminary investigation – but each form has its own specifics (functions, powers, procedure for examining motions) and concludes with a final decision characteristic of the stage.

Special attention is paid to the dual status of the prosecutor at the stage of prosecutorial review of the results of preliminary investigation and its constitutionality.

Key words: prosecutorial review of the results of preliminary investigation, stage of criminal proceedings, pre-trial proceedings, status of prosecutor, preventive measure, indictment.

ПРОКУРОРСКАЯ ПРОВЕРКА РЕЗУЛЬТАТОВ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ КАК СТАДИЯ УГОЛОВНОГО ПРОЦЕССА

ГАМБАРЯН АРТУР
Заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского университета
профессор Академии государственного управления Республики Армения
доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Аннотация. В статье обосновывается положение о том, что досудебное производство в уголовном процессе состоит из двух относительно самостоятельных стадий: стадии предварительного расследования и стадии прокурорской проверки результатов предварительного расследования. Автор критикует подход, согласно которому деятельность прокурора после завершения предварительного расследования рассматривается как заключительная часть данной стадии. Анализируя доктринальные критерии (непосредственные задачи стадии, субъектный состав, процессуальная форма, сроки и завершающий стадию акт), автор показывает, что прокурорская проверка обладает всеми признаками, характерными для самостоятельной стадии уголовного судопроизводства.

Сравнительно-правовой анализ законодательства Латвии, Болгарии, Китая и Испании свидетельствует о том, что в различных правовых системах деятельность прокурора после завершения расследования признаётся самостоятельной стадией уголовного судопроизводства.

В уголовном судопроизводстве Республики Армения стадия прокурорской проверки результатов предварительного расследования имеет две формы реализации в зависимости от того, какой процессуальный акт следователь представляет прокурору: 1) решение вопроса о возбуждении обвинения в суде (когда представляется обвинительное заключение) 2) решение вопроса об утверждении прекращения уголовного производства (когда представляется постановление о прекращении производства). В обоих случаях прокурор выполняет одну и ту же основную функцию — проверяет результаты предварительного расследования. Вместе с тем каждая из указанных форм имеет свои особенности, связанные

с выполняемыми функциями, объёмом полномочий и порядком рассмотрения ходатайств, и завершается принятием итогового решения, характерного для соответствующей стадии.

Отдельное внимание уделяется двойственному процессуальному статусу прокурора на стадии проверки результатов предварительного расследования и вопросу его соответствия Конституции.

Ключевые слова: прокурорская проверка результатов предварительного расследования, стадия уголовного судопроизводства, досудебное производство, статус прокурора, мера пресечения, обвинительное заключение.

Օգտագործված գրականության ցանկ

1. Барабанов П.К. Уголовный процесс Испании. М.: Спутник +, 2021. 382 с.
2. Баранов А. М. Процессуальные ошибки на этапе окончания предварительного следствия и способы их исправления: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1992. 24 с.
3. Дикарев И.С. Модернизация системы досудебного производства в уголовном процессе // Правовая парадигма. 2017. Т. 16, № 2. С. 117-122.
4. Зеленецкий В. С. Возбуждение государственного обвинения в советском уголовном процессе. Харьков: Изд-во при Харьк. гос. ун-те, 1979. 144 с.
5. Манова Н.С., Францифоров Ю.Ф. Процессуальная природа деятельности прокурора при окончании досудебного производства // Российский следователь. 2003. № 8. С. 35-37.
6. Насонова И.А., Буров Ю.В. Процессуальный порядок окончания предварительного следствия с составлением обвинительного заключения. М.: Юрлитинформ, 2012. 232 с.
7. Резяпов А. А. Окончание предварительного расследования с обвинительным заключением (актом, постановлением) и направление уголовного дела в суд: дис. … канд. юрид. наук. Ижевск, 2014. 259 с.
8. Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс. учебник под общ. ред. А. В. Смирнова. 6-еизд., перераб. М.: Норма: ИНФРА-М. 2015. 736 с.
9. Сумин А. А., Химичева О. В. Введение в современный уголовный процесс Китайской Народной Республики: монография. М.: Юрлитинформ, 2024. 408 с.
10. Уголовный процесс европейских государств : монография. Под ред. В. И. Самарина, В. В. Луцика. М.: Проспект, 2018. 752 с.
11. Уголовный процесс. Проблемные лекции / под ред. В. Т. Томина, И. А. Зинченко. М.: Юрайт, 2013. 799 с.
12. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան: 2-րդ լրամշակված հրատ., Երևան, Լուսաբաց, 2017, 632 էջ:
13. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, 613 էջ:
14. Հու Հաոքսին Քրեական հետապնդման և գործերի վերանայման կարգի մասին // Ցզյանսի նահանգի ոստիկանության ակադեմիայի ամսագիր, 2003, № 5, էջ 45-48 (չիներենով):
15. Քվինտերո Խիմենես, Կամիլո Ալբերտո Միջանկյալ փուլը իսպանական քրեական դատավարությունում // Միջանկյալ փուլը և մեղադրական ակտերի նկատմամբ վերահսկողությունը քրեական դատավարությունում (Ճշմարտությունների և առասպելների միջև), Marcial Pons, Մադրիդ, 2021, էջ 25-75 (իսպաներենով):